

ՀՀ կառավարության առջնթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 56/2

18 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով որպես <Գոշ-Գազ> ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ ներկայացած Ա. Միրզոյանի 28.11.2012 թ-ի դիմում-բողոքը (այսուհետ՝ ‘Դիմում’) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Դիմումով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել բողոք ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ, սակայն վերջինիս կցված չի եղել բողոք բերող անձի՝ <Գոշ-Գազ> ՍՊԸ անունից հանդես գալու իրավունքը հավաստող ապացույցը (լիազորագիր):

Այնուհանդերձ որպես <Գոշ-Գազ> ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ ներկայացած անձին պատշաճ ծանուցվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի վերաբերյալ, սակայն վերջինս նիստին չի ներկայացել: Այսպիսով, չնայած լիազորագրի բացակայությանը, դիմումատուին հնարավորություն է ընձեռնվել ներկայացնել անհրաժեշտ ապացույցներ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> <<օրենքի 72-րդ հոդվածի է) կետի համաձայն. <Բողոքը պետք է պարունակի բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը>:

Իր հերթին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> <<օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին>: Նոյն հոդվածի 2-րդ մասի համաձայն. <Վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ>:

Քննարկվող դեպքում Դիմումը բերվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> <<օրենքի 72-րդ հոդվածի է) կետի, ինչպես նաև 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և դեկավարվելով <<արկային ծառայության մասին> <<օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Որպես <Գոշ-Գազ> ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ ներկայացած Ա.Միրզոյանի Դիմումը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՄԵՂՅԱՆ